

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՎԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՖՈՐՈՒՄԻ

26 փետրվարի 2019թ.

ք.Երևան

Մասնակցում էին՝

Արմեն Ղազարյան	-ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայության պետ
Հայկանուշ Չոբանյան	-ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայության Վերադարձի և վերաինտեգրման բաժնի պետ
Տաթևիկ Ազիզյան	-ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայության Վերադարձի և վերաինտեգրման բաժնի գլխավոր մասնագետ
Նունե Առաքելյան	-ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայության Վերադարձի և վերաինտեգրման բաժնի կրտսեր մասնագետ
Կարել Հոֆստրա	-Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն (ICMPD), ERRIN Հայաստան ծագրի ղեկավար
Մարիա Հարությունյան	-Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի հայաստանյան գրասենյակ/ ERRIN Հայաստան ծրագիր, ծրագրի պատասխանատու
Անուշ Խանոյան	-Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի հայաստանյան գրասենյակ, միգրանտների վերադարձի և վերաինտեգրման հարցերով խորհրդատու /ERRIN Հայաստան ծրագիր
Արփինե Վարդիկյան	-Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի հայաստանյան գրասենյակ, միգրանտների վերադարձի և վերաինտեգրման հարցերով խորհրդատու/ ERRIN Հայաստան ծրագիր
Անդրանիկ Հարությունյան	-Կայուն զարգացման հայկական հիմնադրամի (ԿԶՀՀ) հոգաբարձուների խորհրդի համանախագահ
Արփինե Ստեփանյան	-Կայուն զարգացման հայկական հիմնադրամի (ԿԶՀՀ) ծրագրերի համակարգող
Անահիտ Չոբանյան	-Կայուն զարգացման հայկական հիմնադրամ (ԿԶՀՀ) /Միգրացիոն ծառայության Վերաինտեգրման «Մեկ պատուհան» ծառայության խորհրդատու
Տաթևիկ Բեժանյան	-«Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ
Կարինե Խոջայան	-Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակ, ծրագրերի պատասխանատու
Արմեն Բաղիրյան	-Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակ, ծրագրերի պատասխանատու
Ալինա Պողոսյան	-պ.գ.թ., հետազոտող, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, փորձագետ

Օրակարգ՝

1. Ողջույնի խոսք – **Արմեն Ղազարյան** (ՀՀ ՏԿԶՆ ՄԾ պետ)
2. «**ERRIN Հայաստան**» **ծրագիր** – **Մարիա Հարությունյան** (Ծրագրի պատասխանատու)
3. «Վերադարձած միգրանտների սոցիալական և տնտեսական վերաինտեգրումը Հայաստանում (2012-2016թթ.)» գեկույցի ներկայացում/«Վերադարձ ակունքներին» ծրագիր - **Անահիտ Չոբանյան** (Կայուն զարգացման հայկական հիմնադրամ)
4. ՀՀ-ում վերաինտեգրման ծրագրերի շրջանակներում վերադարձողների ամփոփված վիճակագրության ներկայացում - **Հայկանուշ Չոբանյան** (ՀՀ ՏԿԶՆ ՄԾ վերադարձի և վերաինտեգրման բաժնի պետ)
5. Այլ հարցերի քննարկում

2019թ. փետրվարի 26-ին տեղի ունեցավ Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների ֆորումի (այսուհետ՝ ֆորում) չորրորդ հանդիպումը: Մասնակցում էին միջազգային և տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ոլորտում ներգրավված փորձագետներ:

Հանդիպման սկզբում ՀՀ ՏԿԶՆ ՄԾ պետ պրն. Արմեն Ղազարյանը ողջունեց ֆորումին ներկա գտնվող անդամ կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ նշելով, որ առաջին անգամ է, երբ ֆորումի հերթական հանդիպման կազմակերպիչը նախկինում Արտաքին կապերի, այժմ՝ Վերադարձի և վերաինտեգրման բաժինն է: Կարևորելով բաժնի գործառույթները, պրն. Ղազարյանն ընդգծեց, որ, բացի արտաքին կապերից, բաժինը զբաղվելու է նաև վերադարձի և վերաինտեգրման գործառույթներով: Այնուհետև, խոսելով Կառավարության ծրագրի մասին, նա ընդգծեց, որ այդտեղ ևս կան վերադարձի և վերաինտեգրման վերաբերյալ շեշտադրումներ, և առաջիկա հինգ տարիների համար նախատեսված գործողությունների ծրագրում ՄԾ քայլերը պետք է ներկայացվեն ավելի հստակ և մանրամասն: ՄԾ պետը նշեց նաև, որ վերադարձողների համար առանձին գործողությունների ծրագիր կլինի նաև Ինտեգրման հայեցակարգում:

Հանդիպման օրակարգի համաձայն ելույթի խոսքով հանդես եկավ Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի հայաստանյան գրասենյակի (ICMPD) «ERRIN Հայաստան» ծրագրի պատասխանատու Մարիա Հարությունյանը: Նա ներկայացրեց ինչպես «ERRIN Հայաստան» ծրագիրը, այնպես էլ՝ Գերմանիա, Նիդերլանդներ և Բելգիա կատարած այցերի ընթացքում գործընկեր կառույցների հետ

ունեցած հանդիպումների հիմնական արդյունքները՝ նշելով, որ հանդիպումների ընթացքում քննարկվել են նշված երկրներում ազգությամբ հայ միգրանտների իրավական կարգավիճակի, վերադարձ(վ)ող միգրանտների վերաբերյալ վիճակագրության, և ընդհանուր առմամբ, միգրացիոն գործընթացների կանոնակարգմանն ուղղված տարատեսակ հարցեր:

Ծրագրի խորհրդատուներն էլ իրենց հերթին ներկայացրին վերադարձողների վերաբերյալ որոշակի վիճակագրական տվյալներ:

Կայուն զարգացման հայկական հիմնադրամի (ԿԶՀՀ) կողմից իրականացվող «Վերադարձ ակունքներին» ծրագրի միգրացիայի մասնագետ Անահիտ Չոբանյանը ներկայացրեց «Վերադարձած միգրանտների սոցիալական և տնտեսական վերաինտեգրումը Հայաստանում (2012-2016թթ.)» հետազոտության հիման վրա պատրաստված զեկույց:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի համանախագահ պրն. Անդրանիկ Հարությունյանը նշեց, որ հետազոտությունն իրականացվել է՝ նպատակ ունենալով գնահատել Ֆրանսիայի միգրացիայի և ինտեգրման գրասենյակի (OFII) կողմից ֆինանսավորվող և ԿԶՀՀ կողմից իրականացվող «Վերադարձ ակունքներին» ծրագրի շրջանակներում վերադարձողներին հատկացվող վերաինտեգրման աջակցության արդյունավետությունը՝ պարզելու համար, թե որքանով է ծրագիրն աջակցել վերջին 7 տարիների ընթացքում (2012-2016թթ.) հանրապետության տարբեր մարզերում և քաղաք Երևանում փոքր ձեռնարկությունների ստեղծմանը և թե ինչպիսին է դրանց գոյության իրական պատկերն այսօր:

Զեկույցի ներկայացումից հետո ֆորումի հանդիպմանը ներկա մասնակիցների միջև ծավալվեցին քննարկումներ, և զեկույցի շուրջ հնչեցին որոշակի առաջարկներ: Մասնավորապես, առաջարկվեց ուսումնասիրել նույն ժամանակահատվածում (2012-2016թթ.) ՀՀ-ում ստեղծված փոքր ձեռնարկությունների գոյության վերաբերյալ վիճակագրությունը նույնպես և այն համեմատել զեկույցում ներկայացված վիճակագրական տվյալների հետ՝ պարզելու համար ՀՀ-ում ստեղծված փոքր ձեռնարկությունների գոյության պատկերը ևս:

Վերադարձի և վերաինտեգրման բաժնի պետ Հայկանուշ Չոբանյանը ներկայացրեց Հայաստանում իրականացվող վերաինտեգրման ծրագրերի՝ 2018թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ամփոփված վիճակագրությունը, որը հավաքագրվել և

կազմվել էր ոլորտում գործունեություն ծավալող միջազգային, հասարակական կազմակերպությունների¹ տրամադրած վիճակագրության հիման վրա:

Նա նշեց նաև, որ թեև իրականում բացակայում է Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը, սակայն ներկայացված վիճակագրությունը թույլ է տալիս պատկերացում կազմել առնվազն վերաինտեգրման ծրագրերի շրջանակներում ՀՀ վերադարձած անձանց թվաքանակի վերաբերյալ: Ըստ այդմ, 2018թ. ընթացքում Հայաստան է վերադարձել և վերաինտեգրման ծրագրերին դիմել 1675 մարդ, որից 1397-ը՝ կամավոր, 278-ը՝ հարկադիր վերադարձած միգրանտներ են: Միգրացիոն օրենսդրության խստացմամբ պայմանավորված հետդարձի ամենաբարձր ցուցանիշը եղել է Գերմանիայից (62%), այնուհետև՝ Ֆրանսիայից (22%) և Նիդերլանդներից (3.6%): Եզրափակելով իր խոսքը, Հ. Չոբանյանը վերոնշյալ վիճակագրությունը ներկայացրեց նաև ռեադմիսիայի և Եվրոստատի վիճակագրությունների համատեքստում:

Քանի որ ոչ բոլոր կազմակերպություններն էին տրամադրել վիճակագրական տվյալների հավաքագրման ձևաչափին համապատասխան տեղեկատվություն և ոչ բոլոր տվյալներն էին համադրելի, ուստի Հ. Չոբանյանն առաջարկեց քննարկել նաև ձևաչափը, ներկայացնել ձևաչափի հետ կապված դիտողություններն ու առաջարկները, որոնց հիման վրա կկատարվեն փոփոխություններ՝ հետագայում ավելի հավաստի վիճակագրություն ունենալու նպատակով:

Հանդիպման ավարտին որոշվեց՝

1. տրամադրել ձևաչափին համապատասխան վիճակագրություն, որը հնարավորություն կտա համադրել բոլոր կազմակերպությունների տվյալները և առավել հստակ վիճակագրություն ունենալ,
2. ձևաչափը լրացնել և տրամադրել Միգրացիոն ծառայությանը կիսամյակային և տարեկան կտրվածքով:

28.02.2019

¹ Վերաինտեգրման ծրագրերի վիճակագրությունը կազմվել է Հայկական Կարիտասի, Միգրացիայի միջազգային կազմակերպության (IOM), Ֆրանսիայի միգրացիայի և ինտեգրման գրասենյակի (OFII), Վերադարձի և վերաինտեգրման եվրոպական ցանցի (ERRIN Հայաստան) տրամադրած տեղեկությունների հիման վրա: Ներառվել է նաև վերաինտեգրման «Մեկ պատուհան» ծառայության կողմից տրամադրված վիճակագրությունը: